ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____2023թ. **N____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի Հ.345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի ավագանու 16.03.2021 թվականի «Պետական և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման և անցկացման հանձնաժողով ստեղծելու մասին» հ.345-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի ---------- ի
N ----- Ա որոշման

«Հավելված
Երևան քաղաքի ավագանու
16.03.2021թվականի
N 345-Ա որոշման»

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ

Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ — Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Գ.ՍԻՄՈՆՅԱՆ — Երևանի քաղաքապետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ

Համապատասխան վարչական շրջանի ղեկավար

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ

Դ.ԴԱԼԼԱՔՅԱՆ — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ

Ա.ՍԵԴՈՅԱՆ — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Վ.ԱՐԵՎՇԱՏՅԱՆ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ
Ա.ԿՈՏՈԼՅԱՆ	Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Իմ քայլը» խմբակցություն
Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ	Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն
Թ.ՎԱՐԴԱՆՅԱՆ	Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Լույս» խմբակցություն
Ա.ԿՈՍՏՈՒՄՅԱՆ	Հանձնաժողովի աճուրդավար Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության գլխավոր մասնագետ
Ն.ԱԲԵԼՅԱՆ	Հանձնաժողովի արձանագրող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության զարգացման և ներդրումային ենթակառուցվածքային ծրագրերի բաժնի պետ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի Հ.345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 16.03.2021 թվականի «Պետական և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման և անցկացման հանձնաժողով ստեղծելու մասին» հ.345-Ա որոշման հավելվածում կատարել փոփոխություններ:

Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հողամասը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար համայնքի ավագանին ստեղծում է մրցութային հանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը Երևանի ավագանու 16.03.2021 թվականի «Պետական և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման և անցկացման հանձնաժողով ստեղծելու մասին» հ.345-Ա որոշման հավելվածով սահմանվել է հանձնաժողովի կազմը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում՝ հանձնաժողովի կազմում ընդգրկված անձանց շրջանակում առկա են փոփոխություններ, ինչպես նաև հանձնաժողովի կազմում առաջարկվում են նոր անդամներ, ապա անհրաժեշտություն է առաջացել կատարել համապատասխան փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի Հ.345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԸՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքի ավագանու 2021 թվականի մարտի 16-ի հ.345-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի Հ.345-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքի ավագանու 2021 թվականի մարտի 16-ի հ.345-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ